

ՀԽՍՀ ՀՈՂՔԱԿՈՄԱՖ - ԱՅԴԵԳՈՐԾՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

---

ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ  
ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ

---

ԳՅՈՒՂՅՐԱՏ

1937


ՅԵՐԵՎԱՆ

634  
7-95

634  
Դ-95

Պ Տ Ղ Ա Տ Ո Ւ Տ Ն Կ Ա Ր Ա Ն Ի  
ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ

1060 41074  
4/8/3



1937

ՅԵՐԵՎԱՆ

Հայկական ԽՍՀ-ի Ժողկոմխորհը և ՀԿ(Բ)Կ-ի կհնտկոմը  
1936 թ. նոյեմբերի 6-ի «ՀԽՍՀ-ում մրգաբուծությունը և խա-  
ղողաբուծությունը զարգացնելու 1936 թ. աշնան և 1937 թ.  
պլանի մասին» պատմական վորոշման մեջ բոլոր խորհրդային,  
կուսակցական և հողային կազմակերպությունների առաջ իր ամ-  
բողջ սրությամբ խնդիր և դնում լայնորեն ընդարձակելու խա-  
ռողի և մրգատու այգիների տարածությունը:

Խորհանտեսությունների, կոլտնտեսությունների և կոլտե-  
տեսականների ինքնազործունեցության հիման վրա, այդ պլանի  
համաձայն, մինչև 1938 թիվը տնկվելու յե 2524 հեկտար պըտ-  
դատու այգի, վոչ միայն խորհանտեսությունների և կոլտնտե-  
սությունների մասսիվ հողամասերում, այլև կոլտնտեսականների  
տնամերձ հողամասերում:

Յ-րդ հնդամյակում անկասկած այդ տարածություններն ել  
ավելի ընդարձակվելու յեն այն հաշվով, վոր պարտադիր կարգով  
բոլոր կոլտնտեսությունները և կոլտնտեսականներն ունենան  
իրենց սեփական այգիները, վորպեսզի ամբողջ յերկիրը ծածկված  
լինի ծաղկող այգիներով:

Խորհրդային Հայաստանն ունի բոլոր բարեհաջող բնապատ-  
մական պայմանները և հնարավորությունները՝ այգիների զար-  
գացման համար, սակայն վերը հիշված խնդիրների կատարումը  
հնարավոր և նոր տնկումները տնկանյութով ապահովելու դեպ-  
քում, վորի նկատմամբ ամենուրեք մեծ պահանջ և զգացվում:

Ուստի մրգաբուծության զարգացման կարևորագույն խընդունելիք մեկն ել պաղատու տնտեսակների տնկարանային տնտեսության ցանցի ուժեղ զարգացումն ե:

Ժողկոմիորհի և Կենտկոմի վորոշումով սահմանված ե 289,8 հեկտար պտղատու տնկարանների կազմակերպման պլան, վորը գերազանցում ե մինչև այժմ գոյություն ունեցող տարածությունները համարյա 3 անգամ:

Պարզ ու վորոշակի խնդիր ե դրված, վորպեսզի առանց բացառության յուրաքանչյուր շրջան կազմակերպի մի քանի կուտնտեսային տնկարաններ այն չափով, վոր լիովին բավարարի եր ազանի պահանջը տնկանյութի մեջ:

Տնկարանային տնտեսությունը դեկավարելու և լավ տնկանյութ ստանալու համար մեծ հմտություն, փորձ ու գիտություն և պահանջվում, սակայն Հայաստանի կոլտնտեսականների խորագույն մասը համարյա բոլորովին անծանոթ ե այդ գործինք այդ բացը լրացնելու համար հրատարակում ե ներկա բըուցուք, վոր պարունակում ե պտղատու տնկարանի ագրոտեխնիկական միջոցառութների և կանոնների անհրաժեշտ և պրակտիկ մինիմումը:

Այդ բացը լրացնելու համար հրատարակում ե ներկա բըուցուք, վոր պարունակում ե պտղատու տնկարանի ագրոտեխնիկական միջոցառութների և կանոնների անհրաժեշտ և պրակտիկ մինիմումը:

## ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գորդոտու տնկարանի վայրի ընտրության ժամանակ պետք ե հաշվի առնել պաղատու տնտեսակների համար պահանջվող համապատասխան ա) կլիմայական պայմանները, բ) բարձրությունը ծովի մակերևույթից, գ) յերկաթգծին, խճուղիներին մոտ գտնվելը, դ) տվյալ տնտեսության ապահովվածությունը բանվորական ուժով:

2. Տնկարանի տեղի ընտրությունը պետք ե կատարվի հողամասի բազմակողմանի ուսումնակարգան հիման վրա (դիրքը, թեքությունը, հողը և յենթահողի վորակը, ստորերկրյա ջրերի բարձրությունը, ապահովվածությունը վոռոգվող ջրով, պաշտպանվածությունը քամիներից ու անասուններից, տնկարանի հետագա պարզացման հնարավորությունը):

3. Տնկարանի տեղն առանձնապես սերմնարանի համար գերազանցի յն, վոր հարթ լինի, առանց խորդուրորդությունների. անհարթությունը դժվարեցնում ե ցանքի կատարումը, գյուղգործիքների գործադրումը և առաջացնում ե տնկիների անհավասար զարգացում:

Տեղի ընտրության տեսակետից խիստ ցանկալի յեն գետերի հովիտները և սարալանջերի ստորին հարթ մասերը:

4. Աննշան թեքություն ունեցող հողամասերը կարելի յեն ոգտագործել յեթե նրանք ուղղված են դեպի հարավ կամ հարավարևմուտք, քանի վոր այդ թեքությունների վրա բույսերն առավոտյան ցրտերից համեմատաբար քիչ են տուժում: Հողամասի թեքության դեպքում տնկարանի շարքերն անպայման հարկա-

վոր և պասավորել հողամասի դիրքին հորիզոնական ռւզությամբ, կանոնավոր վոռոգումն ապահովելու և հողի վերին պարարտ շերտը լվացումից կանխելու նպատակով:

5. Տնկարանի համար պետք ե ընտրել սննդանյութերով հարուստ, խորը թափանցիկ սեահողերը, ավազակավայրն-կավավազային, մոլախոտերից և քարերից ազատ հողամասերը, խիստծանը կավային հողերը պետքական չեն, քանի վոր նրանք տամբս են վատորակ արմատային սիստեմ ունեցող վայրակները:

Քարքարոտ, շոռաքյաթ, ճահճային, ինչպես նաև խիստ ծանր կավային հողերը տնկարանի համար պետքական չեն:

6. Յենթահողը պետք ե ունենալ լավ ջրաթափանցկություն, այլապես ավելորդ ջրերի կուտակման հետևանքով տնկիները կտուժեն և հեշտությամբ կցրտահարվեն:

Գետք և խուսափել բարձր ստորերկրյա ջրեր ունեցող հողամասերից:

7. Հայտաստանի բոլոր շրջաններում, հատկապես հարթավայրի պլայմաններում, պատղատու տնկարանները պետք ե լիովին ապահովված լինեն վոռովվող ջրով:

8. Բացի տեղի դիրքից և բնական պայմաններից, մեծ նշանակություն ունի թե նախօրդ տարիններում ինչ կուլտուրայով և զբաղված յեղել հողամասը:

Մոլախոտերով վարակված՝ յերկար տարիններ մշակված և ուժամբառ հողերը բնականաբար լավ արդյունք չեն տա, նըսանց հարկավոր և նախապես լավացնել կանոնավոր ցանքտղջանի միջոցով:

9. Մայիսյան բղեղով և ընդհանրապես վնասատուներով վարակված հողերը տնկարանի համար չըկետք և ընտրել:

10. Տնկարանը պետք ե պաշտպանված լինի ցուրտ և ուժեղ քամիներից, անասուններից և տնային թռչուններից:

Դրա համար տնկարանն անհրաժեշտ է ցանկապատել փշառով; Փշոտ թփերով, ինչպես նաև ստեղծել կննդանի ցանկապատ արագ աճող բույսերից (բարդենի, փշատենի, թթենի, ակացիա, գլեզիչիա, հաղարճենի, վայրի տառնձենի, վարդենի, անոտային և զեկորատիվ ծառեր և այլն):

11. Մշտական տիպի խոշոր անկարանի համար առանձնացրած հողամասի տարածությունը չպետք ե պակաս լինի ընդունված ցանքաշրջանառության գաշտերի քանակից, այսինքն՝ 6—7 հեկտարից:

## ՀԱՌԻ ՄՇԱԿՈՒՄԸ

12. Տնկարանի համար ընտրված հողամասը ցանկալի յե, վոր վաղորոք պատրաստված լինի նախարդ այնպիսի կուլտուրաների միջոցով, վորոնք վոչ միայն չհյուծեն հողը, այլև, ընդհակատելը, հարստացնեն այն սննդաբար նյութերով ու բարեկավեն նրանց կառուցվածքը:

Հանձնաբարպամ ե, վորպես նախարդ կուլտուրա, հողամասն գրաղեցնել թիթեռնածաղիկ բույսերով, հարթավայրի շրջաններում՝ առվույտով, լիճնային և նախալեռնային շրջաններում՝ կորնդանով, յերեքնուկով ու վիկայով:

13. Մոլախոտերով խիստ վարակված հողերը պետք ե գոնեալ տարի թողնել մեկ ցեղի կամ շարքահերկ կուլտուրաների տակ, ու նրա կանոնավոր մշակումով ազատել հողամասը մոլախոտերից:

14. Տնկարանի համար հատկացված հողամասը հարկավոր և ներկել արակառի կամ ձիու գութանով, 18—25 ամ խորությամբ, նայած հողի տեսակին:

Վարենգ կրօն ազատ պլանտաժային գութաններ, կարելի յե նրանցով հերկել հողամասը մինչև 30 ամ խորությամբ:

15. Գարնանը պտղատուծաների սերմեր ցանելու կամ վայրակներ տնկիելու գեղգում հողամասն անպայման պետք ե ներկել վաղ աշնանից, թողնելով այն առանց փոցխելու ամբողջ ձմեռվա ընթացքում:

Վաղ գարնանային աշխատանքներն սկսվելուն պես այդ հողամասերում 13—15 ամ խորությամբ կրկնահերկ անել և հետո փոցխել զիգզագ փոցխով՝ մեկից յերկու յերես:

Աշնանը ցանք անելու կամ վայրակներ տնկիելու համար, հողամասը պետք ե ներկել գարնանից, ամառն ընթացքում փոցխելով հողը 2—3 անգամ՝ խոնավությունը պահպանելու և մոլախոտերը գոչնչացնելու համար, ցանքի ժամանակ կրկնահերկ կատարելով 13—15 ամ խորությամբ:

16. Տնկանյութի աճեցողության գլխավոր պայմանները հողամասի կանոնավոր մշակումն են:

Պետք ե ճիշել, վոր ուժապառ հողից լավ տնկանյութ չք ստացվի, ուստի հողամասը պեսք ե պարարտացնել այլապես սերմնաբույսերը և վայրակները կզարդանան շատ դանդաղ և նվազ:

Բացի պարարտ և թիթեռնածաղիկ բույսերի տակ դտնված հողերից, մյուս բոլոր տեսակի հողերը (հատկապես յերկար տարիներ հացահատիկային կուլտուրաներով զբաղված, ինչպես նաև փոշիացած ու կառուցվածքը կորցրած հողամասերը) պետք ե պարարտացնել գումադրով՝ հեկտարին 30—40 տոննի (60—80 տացի սահմաններում):

Գոմադրի պակասության գեպքում կարելի յե սահմանափակվել հանքային պարարտանյութերով. պարարտանյութերի միջն դոզաներն են մեկ հեկտարի համար՝ սուպերֆոսֆատ 3—4 ցենտներ, քլորական կալիում 2—3 ցենտներ և ամոնիում-սուլֆատ 2,5—3 ցենտներ:

17. Տնկարանում տնկիների աճեցման համար պահանջվում ե յերկու տարի կորիզավորների համար և 4 տարի հնդավորների համար. այդ ժամանակամիջոցում տնկիներն ուժեղ չափով հյուծում են հողը, ուստի ցանք անել նույն տեղում յերկրորդ աճամ կարելի յե միայն 3—4 տարի անցնելուց հետո:

## ԱԵՐՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

18. Տնակարանում ցանք կատարելու համար պետք ե պատրաստել պտղատու ծառերի սերմեր—խնձոր, տանձ, բար, շոր, կեռաս, դեղձ, ծիրան, նուշ և այլն:

Խնձորի, բարի, տանձի, շորի, կեռասի սերմերը, վորպես կանոն, պետք ե վերցնել անտառային վայրի պտղատու ծառերից. ծիրանի կորիզները «խարջի» կոչվող ծիրանից, դեղձը՝ բոլոր լավորակ փոփոխակներից, նախորոք ապրորացիայի յենթարկելուց հետո:

19. Հայաստանի բոլոր անտառային շրջանները ՀԺԿ-ի պլանի համաձայն պարտավոր են ապահովել շրջանի անտառներից սերմեր հայթայթելու գործը. այդ և եժան կնստի, և ստուգված սերմ կստացվի. սրա առավելությունը նաև այն է, վոր տվյալ շրջանի պատրաստած սերմերն ավելի լավ են հարմարված տեղական հողային և կլիմայական պայմաններին:

Անտառագուրկ շրջանները սերմեր կարող են ձեռք բերել ՀԺԿ-ի կարգագրի համաձայն, այլ անտառային շրջաններից:

20. Սերմերը սթերելու համար անհրաժեշտ ե վաղորոք ուսումնասիրել տվյալ անտառի պտղատու ծառերի վայրը, նույնիսկ առանձին ծառեր, և ոգտագործել միայն այն ծառերը, վորոնք քիչ փուշ ունեն և աչքի յեն ընկնում իրենց չորադիմացկունությամբ կամ ցրտադիմացկունությամբ, առատ պտղաբերությամբ և հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ ունեցած կայունությամբ:

21. Վայրի պտղատու ծառերի մեջ յերբեմն զգալի չափով նկատվում են ուշահաս-ձմեռային փոփոխակներ, վորոնք միջահաս պտղալուների մասամական հավաքման ժամանակ գեռնես լիովին հասունացած չեն լինում: Այս գեպքում անհրաժեշտ ե պատղների հավաքումը կատարել ըստ հասունացման և յերեք նրանց շմառնել:

22. Սերմերը պետք ե պատրաստել միանգամայն հասունացած պտղալուներից. չհասունացած սերմերն ունենում են ցածր ծրունակություններ՝ նրանք չպետք ե վարակված լինեն հիվանդություններով ու վնասատուներով, նկատված գեպքում անհրաժեշտ ե անմիջապես ջոկել և հեռացնել:

Խաշած պտղալուներից յերեք սերմեր ստանալ չե կարելի, վորովինետե նրանք ամբողջովին կորցնում են ծլունակությունը:

23. Դեղձի և ծիրանի կորիզները հանում են պտղալուները կարտելով կամ թե կարելի յե ստանալ կոնսերվի գործարաններից, սառը վերամշակում կատարելու գեպքում:

24. Խնձորի և տանձի սերմերի մասսայական պատրաստման ժամանակ գործադրվում ե հետեւյալ միջոցը.

Հավաքված պտղալուներից կույտեր են կազմում 50—60 ամբարձությամբ և չտաքանալու համար հաճախակի խառնում թիակով:

Յերբ պտուղները գերհասունանում են և նույնիսկ նեխում, հարկավոր ե ջարդել փայտյա թակերով: Այսուհետեւ լցնել տաշառի մեջ ու ջուր ածել վրան, ապա այդ խառնուրդը վորեն փայտով լավ տրորեն վորից չեչը կրարձրանա վեր, իսկ սերմերը կիման տակառի հատակում: Զուրը և չեչը թափելուց հետո սերմերը վերցնում են մաղով, նորից տրորում ու մաքրում և ապա փուռմ ու չորացնում ստվերում: Չորացնելուց հետո հարկավոր ե լավ մաղեր, քամհարել, հեռացնել նրանից բոլոր կեղուերը, ինչպես և անպետք սերմերն ու պահել միներից ազատ, հով պահեստներում, փոքր պարկերի մեջ՝ նրանց յերկաթարարով կախելով պահատաղից կամ պատերից:

Սերմ ստանալ կարելի յե նաև հետեյալ ձևով, պտղահատով, վորտեղ այդ կա, կամ թե փայտյա թակերով, պտուղները ջարդելուց հետո լցնել լայն տաշտի վրա գրված՝ պտղի սերմի մեծություն ունեցող թիթեղյա ցանցերի վրա, ապա լավ տրորել և ըլանալ, վորի հետևանքով պտղից դուրս յեկած սերմերը ցանցի ծակութների միջոցով կթափեն ցած, տաշտի ջրի մեջ, իսկ չեչը կիմա ցանցի վրա:

Սերմը տաշտից հանելուց հետո պետք է նորից լվալ ու չորացնել ստվերում:

25. Սերմերի յելույթը մեծ չափով կախված է պտղի մեծությունից և վերամշակման վորակից:

Հայաստանի պայմաններում մեկ ցեստներ թաց պտղից կարելի յե ստանալ մոտավոր հաշվիներով հետեյալ քանակությամբ սերմ:

1. Խնձորից ու տանձից . . . . .	1,2—2	կիլո
2. Շլորից . . . . .	20—22	»
Բալից և կեռասից . . . . .	15—20	»
Ծիրանից . . . . .	20—25	»
Դեղձից . . . . .	15—20	»

26. Սերմի վորակը վորոշելու համար պետք է ստուգել նրա ծլունակությունը և մաքրությունը:

Մեծ քանակությամբ վասատուներով վարակված, ջարդված, տհաս, չմշկված, կեղեր ջարդված, ինչպես նաև պտուղների չեչը

մնացորդներ և այլ տեսակի սեռած աղբ ունեցող սերմերն անոռակ են համարվում, ուստի պետք է աշխատել նվազագույնի հասցնել նրանց:

27. Լավ հասունացած և պատրաստված սերմերը պետք ե լիքը, ամուր ու ճկուն լինեն, նրանց կտրվածքը պետք է ունենա սաքուր, սպիտակ գույն, արտաքին կեղերը լինի փալուն, խնկույնը՝ խնձորինը բաց շագանակագույն, տանձինը՝ մուգ շագանակագույն կամ սև:

Թարմ և առողջ սերմերն ունենում են դուրեկան համ:

Սերմերի զեղնավուն կտրվածքը ցույց է տալիս, վոր նա հին ե, ապակենմանը՝ խաղած, նեխած համ ու հոտ, բորբոսնած, փշացած:

Կորիզավորների ներքին պատյանի թառամած ու չմշկված մինելը վկայում է այն մասին, վոր կորիզները հին են:

28. Սերմերի պիտանիությունը ճշտորեն վորոշել հնարավոր և միմիկայն ծլեցման միջոցով:

Բաց քանի վոր պտղատու ծառերի սերմերի ծլեցումը տեսվում է բավականին յերկար ժամանակ (2—4 ամիս), այդ պատճառով, արտաքին գննում կատարելուց բացի, կարելի յե սերմերն ուղարկել Յերևան՝ հանրապետական սերմստուգող լաբորատորիային, վորտեղ ծլունակությունն ստուգվում է ներկման միջոցով 1—2 որվա ընթացքում:

Սերմի վորակը կարելի յե ստուգել նաև շրջանային լաբորատորիայում:

Սերմստուգող լաբորատորիային ուղարկվելիք նմուշի չափը պետք է լինի՝ հնդավորները 100 գրամ և կորիզավորները՝ 500 գրամ:

29. Նորմալ վորակի սերմերը պետք է բավարարեն հետեյալ նվազագույն սրահանջները:

Ծլունակություն	Մաքրություն	Խոնավարյուն
1. Խնձոր . . . . .	80%	95%
2. Տանձ . . . . .	80 »	92 »
3. Դեղձ . . . . .	90 »	98 »
4. Ծիրան . . . . .	95 »	98 »
5. Շլոր . . . . .	75 »	98 »
6. Բալ և կեռաս . . . . .	75 »	95 »

15—16 %

## ՅԱՆՔԵ

30. Հայաստանի բոլոր շրջաններում, պաղատու սերմերը միջա պետք և ցանել աշնանը: Բայց յեթև անբարենպաստ յեղանակների կամ վորեւ այլ արտակարգ պայմանների հետեւանքով աշնանը ցանը կատարելը հնարավոր չի լինում, այս գեղը ում, դարնանը ցանելու համար սերմը պետք և պահել հատուկ պայմանների մեջ՝ ձմռան ընթացքում:

Սերմերը մինչեւ գարնան ցանը կատարելը պահում են պատգի մեջ կամ, ինչպես ասում են, սուրարժիկացիայի յեն յենթարկում:

Ավազացման համար վերցնում են մերկ մաս սերմ և լավ խառնում—յերեք մաս մաքուց, թաց ու մաղած՝ գետի միջակ մեծության ավաղի հետ: Սերմերն ավաղի հետ լցնում են փայտե արկղների կամ կավե ամանների մեջ և դնում հող պահեստում: Ժամանակ առ ժամանակ ավազեցրած սերմերը խառնում են և ջուր ցանում այն չափով, վոր խառնուրդը միշտ խոնավ վիճակում լինի:

Այսուհետեւ այդ խառնուրդը կարելի յէ թաղել հողի կամ ձյան մեջ, վորեւ շենքի հյուսիսային կողմում:

Կարելի յէ պահել նաև հող պահեստներում:

31. Կորիդավոր տեսակները — շլոր, բալ և կեռաս անգամ աշնան ցանքի գեղքում, պետք և ստրատիֆիկացիայի յենթարկել պատղից հանելուց անմիջապես հետո, այլապես նրանք կտրող են վատ ծել կամ բոլորովին չծել:

32. Մեծ քանակությամբ սերմեր կամ կորիդներ ստրատիֆիկացիայի յենթարկելու գեղքում պետք և ցանկացած յերկարությամբ, 70 սմ խորությամբ և մեկ մետր լայնությամբ խրամատներ փորել և սերմի կամ կորիդի ավաղի խառնուրդը լցնել 50—60 սմ հաստության շերտով: Այդ խառնուրդը պետք և պահել խոնավ վիճակում և ըստ պահանջի ջրել ցնցուղով ու հաճախակի խառնել: Խրամատի վերին շերտը պետք և ծածկել ճլոպով կամ ծղոտով, իսկ ձմռանը՝ միմիայն 15—20 սմ հաստության հողաշերտով:

Ստրատիֆիկացիայի յենթարկված սերմերը պետք և պաշտպանել ջրի վողողումից: այդ նպատակով խրամատի շուրջն առող հանել իսկ մկներից պաշտպանելու համար թույներ ցըել:

## ՅԱՆՔԵ

33. Հայաստանի պայմաններում թե հնդավորների (ինձու, տանձ) և թե կորիդավորների (զեղձ, ծիրան, բալ, շոր, կեաս, նուշ) սերմերն անհրաժեշտ ե ցանել աշնանը:

Աշնան ցանքերը տալիս են ավելի լավ և ավելի համահավասար ծիրեր և անհրաժեշտություն չի լինում պահել ձմեռը:

Առարարակի կացիայի յենթարկել, վորը բավկանին ծանը ե: Լեռնային և նախալեռնային պայմաններում ցանքի բազագույն ժամկետը սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 20-ն և, իսկ հարթավայրում՝ սեպտեմբերի 20-ից նոյեմբերի 15-ը:

Գարնանը պետք և ցանել վաղ՝ դաշտային աշխատանքներն սկսելուն պես:

34. Ալլահվերդու, Մեղրու, Ղափանի և իջևանի շրջանների ցածրադիր վայրերում լավորակ հողի և կանոնավոր մշակության տոկայության պայմաններում միանդամյան հնարավոր և հնդավորների ցանքը կատարել վոչ թե սերմանոցում, այլ տնկարանում: Վորտեղ և հենց նույն տարին աշքապատվաստ կառարել:

35. Հնդավորների ցանքը մյուս շրջաններում սովորաբար կատարվում և սերմանոցում:

Դրա համար մարգոցով կամ շրջող գութանով մարգեր (լաքեր) պիտի պատրաստեր

Նայած ույլեցին, մարգերը հարմար և պատրաստել 5-ից մինչև 15 մետր յերկարությամբ և 100-ից 120 մմ լայնությամբ: Արանից ավելի լայն պատրաստած մարգերը ցանկալի չեն, վորովհետև այս գեղքում դժվարանում են մշակման աշխատանքները:

Մարգերի թմբերը պետք և կապել 40 սմ լայնությամբ:

Մարգերը պատրաստելուց հետո անհրաժեշտ և մարգերի մեջը փիրեցնել բահով և հարթեցնել ձեռքի փոցխով:

35. Ապա ակոսներ են քաշում անպայման մարգի լոյնքի ուղղությամբ, քանի վոր վերջին գեղքում հնշտանում են ցանքը և մշակման աշխատանքները:

Ակոսները կարելի յէ քաշել հատուկ պատրաստած ակոսա-

քաշով, ցանքի տախտելով, կամ ուղղակի սովորական ձեռքի փայտյա փոցխով:

Ակոսի խորությունը ինձորի, տանձի սերմեր ցանելու համար պետք ե ընդունել 2—3 սմ, իսկ շարքերի հեռավորությունը՝ 15 սմ:

Գեկերովկա (վերատնկում) նախատեսելու դեպքում ցանքը կատարվում ե ավելի խիստ:

36. Խիստ հարմար ե միեւնույն մարգում ցանքը կատարել յերկու հոդով միաժամանակ թմբերի յերկու կողմից:

Սերմերը լցնում են գոզնոցի կամ վորեև պարեի մեջ և բռավ վերցնելով սերմերն աջ ձեռքի բութ մատի և ցուցամատի միջով համաշափորեն ու անընդհատ թափում գծած ակոսի մեջ:

Ցանքն ավարտելուց, առանց ուշացնելու պետք ե սերմերը ծածկել հողի բարակ շերտով, հետևելով, վոր բոլոր սերմերը հավասարպես ծածկված լինեն և մարգերում խորգությունները չնեն:

Սերմերը կարելի յե ծածկել վոտքով կամ ձեռքի փոցխի հակառակ յերեսով: Մեծ տարածությամբ տնկարան կաղմակերպելու ու հարթ հողամասի դեպքում ցանքը կատարել շարքայն մեքենայով:

Ստրատիֆիկացիայի յենթարկված սերմերը ցանում են բռավավագի հետ խառը, պահպանելով վերը նշված խոռությունը:

37. Կորիզավորների ցանքը կարելի յե կատարել թե առանց մարգերի և թե մարգերում:

Մարգերը պատրաստում են մարգոցով, նայած ունիչեքին մինչեւ 50 մետր յերկարությամբ և 2,70 սմ լայնությամբ:

Մարգերի մեջ զուգահեռ ուղղությամբ բլլիցով կամ կուլտիվատորով 90 սմ հեռավորության վրա շարքեր են անցկացվում։ այսպիսով մեկ մարգի մեջ կտեղավորվի յերեք շարք, վորից մեկական շարքը կընկնի թմբերի տակ, իսկ 3-րդը՝ մեջտեղը։

Կորիզները ցանքում են 5—10 սմ հեռավորությամբ և 3—4 սմ խորությամբ, նայած կորիզի մեծության (դեղէլ՝ խոր, զորը՝ յերես, և այլն):

Հարթավայրերի ըրջաններում հնարավոր ե կորիզավորները ցանել շարքացան մեքենայով:

38. Հայաստանի հարթավայրի ըրջաններում ցանքած սերմերն անպայման պետք ե ջրել, կամ թե կարելի յե նախապես ջրել և ապա ցանք անել (արաթ անել):

Մյուս ըրջաններում չոր հողի և կլիմայի դեպքում ջրելը ևս անպայման անհրաժեշտ ե:

39. Հարթ հողամասեր ունենալու դեպքում կորիզավորների ցանքը կարելի յե կատարել առանց նախապես մարգեր պատրաստելու։ Դրա համար պետք ե փոցխած և լավ հարթեցրած հողամասում հավասար հեռավորության վրա լարեր անցկացնել և նրանց ուղղությամբ ձիռ կուլտիվատորով ակոսներ քաշել և կորիզներ ցանել:

Հատագայում արգեն ջրելու ժամանակ բլլիցով կամ կուլտիվատորով առուներ անցկացնել ու ջրել:

40. Ցանք կատարելու համար սերմերի ճիշտ նորմաները սահմանվում են նրանց վորակի, ծլունակության, մաքրության, ցանքի ժամկետի և միջշարքային տարածությունների լայնության համեմատ:

Ցանք ծլունակության և գարնանը ստրատիֆիկացիայի յենթարկված սերմերը ցանելու դեպքում ցանքի նորմաները պետք ե ավելացնել:

Հայաստանի համար ընդունված են ցանքի հետևյալ մոտավոր նորմաները մեկ հեկտարի համար։

1. Խնձոր . . . . .	40	»	80	»	»	»	»	92	»	»	»	»
2. Տնձ . . . . .	500	»	90	»	»	»	»	98	»	»	»	»
3. Դիղձ . . . . .	250	»	95	»	»	»	»	98	»	»	»	»
4. Եղոր . . . . .	200	»	75	»	»	»	»	98	»	»	»	»
5. Բալ . . . . .	120	»	75	»	»	»	»	95	»	»	»	»
6. Կեռաս . . . . .	120	»	75	»	»	»	»	95	»	»	»	»
7. Նուշ . . . . .	225	»	80	»	»	»	»	98	»	»	»	»
8. Ընկույզ . . . . .	400	»	—	»	»	»	»	98	»	»	»	»

## ՄԵՐՄԱՆՐՅԻ ՅԵՎ ՏՆԿԱՐԱՆԻ Ի-ԻՆ ԴԱՅՏԻ ԽՆԱՄՔԸ

41. Ցանքերի խնամքը կայանում և մոլախոտերը քաղցանելու, հողամասը փիրեցնելու, ջրելու և բույսերը նոսրացնելու մեջ:

42. Ամառվա ընթացքում մոլախոտերն այնքան են զարգանում, վոր յեթե նրանք հաճախակի քրաղնանվեն, ամբողջովին կիսդին ցանած բույսերին:

Քաղճան և փիրեցում, նայած հողամասի պայմաններին, պետք և կատարել տարվա ընթացքում 5—6 անգամ:

Կորիզավորների միջարքային տարածության փիրեցումն անհրաժեշտ և կատարել ձիու կուլտիվատորով, իսկ բույսերի արանքնիրում՝ թակուչակներով:

Կեղեր փշրելու և խոնավությունը պահպանելու համար հարկավոր և փիրեցումը կատարել ջրելուց կամ անձրեներից հետո հողի քեցը գալուն պես. կեղևակալող ծանր հողերի յերեսը փշրել ինչքան կարելի յե հաճախակի:

43. Ցանքսերի ջրումը կատարվում և ըստ կարիքի. պետք և ջրել հավասարաչափ և բավականին առատ. Ջրելուց պետք և հետևել վոր ջրի հոսանքը դանդաղ լինի և մարդերում լճացում չգոյանա:


Խնձորի և տանձի սերմեր ցանած մարգերը պետք և ջրել շատ բարակ և դանդաղ ջրի հոսանքով, այլապես ցանած սերմերը կամ մատղալ ծիլերն ամբողջովին կքանդվեն:

Նայած հողային և կլիմայական պայմաններին, լեռնային և նախալեռնային շրջաններում ցանքերը կարելի յե ջրել 4—5 անգամ, իսկ հարթավայրում՝ 6—8, նույնիսկ 10-ը և ավելի անգամ (Հոկտեմբերյան): Ջրումը ցանկալի յե կատարել յերեկոյան կամ առավոտյան պահին:

44. Վաղ գարնանը, յերբ հնդավորների սերմնաբույսերը կունենան 1—2 իսկական տերե (չհաջված շաքիլային տերեները), բայց վոչ ուշ 10—15 որ ծիլուց հետո հարկավոր և կատարել բույսերի նոսրացում, թողնելով բույսերը 1—2 ամ հեռավորության վրա:

15—20 որ անցնելուց հետո, յերբ բույսերն ամրանում են, կատարվում և 2-րդ նոսրացումը, այս անգամ արդեն 5 ամ վրա:


45. Կորիզավորների նոսրացումը ևս կատարվում և 2—3




Նկ. 1. Սերմաբույսերի վերատնկումը բերի միջոցով

նվազ. հարթավայրի շրջաններում և Մեղրու, Աղակերպու, իջեղավանի ու Ղափանի շրջանների ցածրադիր վայրերում բույսերի վերջնական հեռավորությունն իրարից թողնել 30—35 ամ, մյուս բոլոր վայրերում՝ 20—25 ամ:

46. Նոսրացման ժամանակ հեռացվում են ավելի թույլ և աճման մեջ հետ մնացող բույսերը: Նոսրացումը պետք և կատարել այն ժամանակ, երբ հողը բավականաչափ խոնավ է, իսկ չոր յեղանակի գեղքում անհրաժեշտ և նախապես ջրել:



Նկ. 2. Խնձորենու սերմնաբույսի արմատային սիստեմը—(1) չվերատնկված և (2) վերատնկված



Պատ. տնկ. ագրոսեխ. ձեռնարկումերը ՀՀ ՀԱՀ-ԾՕԲ

տակն ե՛սերմնաբույսերի համար ստեղծել լավ արմատային սիստեմ և ոգտագործել նոսրացրած սերմնաբույսերը:

Վերատնկումը կատարել այն ժամանակ, յերբ բույսերը կունենան յերկու հատ իսկական տերեններ:

Սերմնաբույսերը վերատնկելու համար պետք է կարել նրանց արմատները մեկ յերրորդ մասով, վորից հետո տնկել հատուկ մարգերում և ծածկել հողով մինչև շաքիլները, ու հողն ամուր սեղմել արմատներին, վորից հետո ջրել և ծածկոցով ծածկել միքանի որ, մինչեւ սածիլի կպնելը:

Կորիզավորների բույսերը վերատնկման կարիք չեն զգում, քանի վոր նրանք վատ են դիմանում դրանց ու առանց այն ելուննեն լավ փնջավոր արմատային սիստեմ:

## ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՀԱՆԵԼԸ

48. Աշնանը խնձորի և տանձի սերմնաբույսերն այնքան են մեծանում, վոր նրանց մեծ մասը պետքական և լինում տնկարանում տնկելու՝ հետագայում պատվաստ անելու համար:

49. Սերմնաբույսերի հանման լավագույն ժամկետն աշունն ե, աճեցողության դադարումից և տերեւաթափից հետո՝ մոտավորապես հոկտեմբերի 15-ից մինչեւ նոյեմբերի 15-ը:

50. Յեթե ամառվա ընթացքում նկատվի, վոր ուժեղ աճեցողության հետևանքով վայրակները ժամանակին չեն հասունանան և տերեւաթափ չլինի, հարկավոր ե վայրակները քանդելոց 30—40 որ առաջ դադարեցնել հողամասի ջրելը, քաղհանելը և փխրեցնելը:

51. Վայրակները պետք ե հանել այն գեղքում, յերբ նրանց ձնշող մասի արմատավղիկի հաստությունը 4—5 միլիմետրից պակաս չե:

Կորիզավորների սերմնաբույսերը <sup>6</sup>(վայրակները) չպետք է հանել, վորովհետև նրանք պատվաստվում են հենց նույն ցանքի տարօւմ, իսկ տհամները թողնվում են նույն տեղում՝ հաջորդ տարվա գարնան կամ ամռան պատվաստ անելու համար:

## ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄԸ

52. Տնկարանում վայրակների հավասարաչափ աճեցողությունն ապահովելու և նրանց միաժամանակ աչքապատվաստին հասցնելու համար, վորպես կանոն, հանված վայրակներն անհրաժեշտ ե տեսակավորման յենթարկել:

53. Տեսակավորման ժամանակ վայրակներն այս կամ այն կարգը գասելու համար առաջնորդվում են հետևյալ ցուցանիշներով.

ա) ցողունի հաստությունն արմատավղիկին մոտ (այն տեղը, ուր արմատը վերջանում է և ցողունն է սկսվում).

բ) արմատային սիստեմի բնույթը, ճյուղավորման աստիճանը և աճեցողության ուժը.

շ) վայրակի ընդհանուր դրությունը և աճեցողությունը:

54. Հնդավորների տեսակավորման համար յերեք կարգ ե սահմանված. 1-ին կարգը գասվում են այն վայրակները, վորոնք ունեն լավ զարգացած արմատային փնջերով հարուստ արմատային սիստեմ և արմատավղիկի հաստությունը 6,5 միլիմետրվակիլի յե:

8—9 միլիմետր և ավելի հաստություն ունեցող վայրակները, վորոնք միաժամանակ ունեն փնջային լավ արմատային սիստեմ, գասվում են «եբսրա» կարգու:

2-րդ կարգը գասվում են համեմատաբար լավ արմատային սիստեմ ունեցող արմատները, վորոնք ունեն արմատավղիկին մոտ 4,5-ից մինչեւ 6,5 միլիմ. հաստություն:

3-րդ կարգը գասվում են 3—4 միլիմետր հաստության վայրակները:

55. Սերմնաբույսերի նորմալ խնամքի և մշակման գեղքում տարվա վերջին մեկ հեկտար տարածությունից պետք է ստանալ 250 հազար հատ վայրակ, վորից ապրանքային յելույթ՝ 200 հաշոր հատ, այդ թվում առաջին տեսակի և «եբսրա» 30%—60 հազար հատ, 2-րդ տեսակի՝ 45%—90 հազար հատ և 3-րդ տեսակի՝ 25%—50 հազար հատ:

56. 3 միլիմ. պակաս հաստությամբ, թույլ, հիվանդութ, վիրա-

վորված արմատներով և արմատավղիկով, ծոմոված ցողունով և արմատավղիկով վայրակները համարվում են խոտան (բրակ). այդպիսիները տնկման համար պիտանի չեն և յենթակա յեն վոչնչացման:

57. «Ընթարա» 1-ին և 2-րդ կարգի վայրակները նախատեսվում են տնկել տնկարանում և նույն տարին աչքապատվաստման յենթարկել, իսկ 3-րդ կարգը—յեթե նրանց թույլ անեցողությունը հետեւանք ե յեղել հողի անբավարար բերրիության, վատ խնամքի կամ անբարենպաստ կլիմայական պայմանների, ապա այդ դեպքում նրանց մշակման բարենպաստ պայմանների մեջ դնելով կարելի յե ևս պատվաստի հասցնել, հակառակ պարագայում պետք ե նորից յետ տնկել սերմանոցում, բայց ավելի նոսր քան մինչ այդ յեղել ե:

Ալլահվերդու, իջևանի, Մեղրու և Ղափանի շրջանների ցածրադիր վայրերում խնամքի լավագույն պայմաններ ստեղծելու դեպքում 3-րդ կարգի վայրակները կարելի յե նույն տարին հասցնել պատվաստի, ուստի նրանց յետ տանել սերմանոցն ավելորդ ե:

## ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ԹԱՂՈՒՄԸ ՅԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

58. Յեթե վայրակներն աշնանը չեն տնկվելու, ձմեռվա ընթացքում նրանց պահպանելու համար, տեսակավորումն ավարտելուց անմիջապես հետո անհրաժեշտ ե թաղել հողի մեջ:

59. Թաղելու համար պետք ե ընտրել չոր ու բարձրադիր տեղ, ուր ջրերը չեն ճանում և սառերեկրյա ջրերի կուտակում չի լինում:

Այստեղ պետք ե առու փորել 20—30 ամ խորությամբ, փորի մեկ պատը թեք անել ու այնտեղ շարել մի շարք վայրակներ, հետո հող լցնել այնպես, վոր վայրակներն ամբողջովին ծածկվեն հողով, ապա դարսել 2-րդ շարք վայրակները, նույնպես ծածկել հողով և այլն:

Հողը պետք ե լավ նստեցնել արմատներին և արորել:

Թաղելուց հետո հարկավոր ե ջրել վորպեսզի դատարկ տեղ՝ չմնան:

60. Զմեռվա ընթացքում վայրակներին մեծ ֆսաս են պատճառում մկները, վորոնց դեմ պետք ե միջոցներ ձեռք առնել,  
ա) թաղելու հողամասն ընտրել շենքերից, գեղեցից հեռու տեղ,

բ) հողամասը մեկուսացնել առվի և փշոտ բույսերի միջոցով.

գ) ձմեռվա ընթացքում հողամասի շրջապատի ձյան շերտն ամրացնել տրորելով.

դ) թունավորել հողամասը մկնդեղով:

## ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ՏՆԿԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՑՑՈՒՄ

61. Վայրակները սերմանոցից հանելուց ու տեսակավորելուց հետո պետք ե տնկել տնկարանի մի այլ հողամասում, ուր նրանք աչքապատվաստման պիտի յենթարկվեն. այդ հողամասը կոչվելու յե տնկարանի առաջին դաշտ:

62. Աշխատանքների հարմարության համար վայրակների դաշտը պետք ե բաժանել կվարտաների (հողակտորների):

Կվարտաները կազմվում են կես հեկտար տարածությամբ և բաժանվում միմյանցից 2 մետր լայնություն ունեցող ճանապարհներով:

63. Վայրակների տնկումը տնկարանի առաջին դաշտում կարելի յե կատարել թե աշնանը և թե գարնանը. աշնան տնկման դեպքում, բնականաբար, վայրակների թաղումը լինելու յե ժամանակավոր ու թեթևակի:

Հայաստանի հարթավայրի շրջաններում, ինչպես նաև Արևմիերդու, իջևանի, Ղափանի և Մեղրու շրջանների ցածրադիր վայրերում հնարավոր ե վայրակները տնկել աշնանը, իսկ լեռնային և մյուս նախալեռնային շրջաններում՝ միայն գարնանը:

Վայրակներն աշնանը պետք ե տնկել նրանց տերևաթափից հետո, իսկ գարնանը՝ ձյունը վերևալուց հետո, առաջին գարնանային աշխատանքներն սկսվելուն պես:

64. Տնկարանի համար առանձնացրած հողամասի բերրիության նկատմամբ նույն պահանջներն են առաջադրվում, ինչպես սերմանոցային դաշտի համար:

Տնկարանի հողամասը պետք եւ բավականաչափ բերրի մինի կամ լավ պարարտացըրած, քանի վոր տնկիները միենույն հողամասում մնալու յեն 2—3 տարի:

65. Վայրակների տնկման հողամասը նախապես պետք եւ աղատված լինի մոլախոռութից և բարելավված նախորդող կուլտուրաներով՝ ցանքաշրջանառության միջոցով:

Վորպես որինակելի, հանձնարարվում եւ ցանքաշրջանառության հետևյալ սխեման.

Նախալեռնային յեվ լեռնային ցողաների համար 6-դաշտան ցանքաշրջանառության

- |      |      |                |              |                    |
|------|------|----------------|--------------|--------------------|
| 1-ին | դաշտ | վայրակների     | տնկելը       |                    |
| 2-րդ | »    | 1-ին           | տարվա        | տնկիներ            |
| 3-րդ | »    | 2-րդ           | »            | »                  |
| 4-րդ | »    | բանջարանոցային | կուլտ.       | լրիվ պարարտացումով |
| 5-րդ | »    | բանջարանոցային | կուլտուրաներ |                    |
| 6-րդ | »    | վիկա           |              |                    |

Հարբավայրի ցողաների համար 7-դաշտան ցանքաշրջանառության

- |      |      |                |                            |                    |
|------|------|----------------|----------------------------|--------------------|
| 1-ին | դաշտ | վայրակների     | տնկելը                     | և աչքապատվաստ      |
| 2-րդ | »    | 1-ին           | տարվա                      | տնկիներ—միամյակներ |
| 3-րդ | »    | 2-րդ           | »                          | » յերկամյակներ     |
| 4-րդ | »    | բազմամյա խոտեր | (հացահատիկային յենթացնքով) |                    |
| 5-րդ | »    | բազմամյա       | խոտեր                      |                    |
| 6-րդ | »    | »              | »                          |                    |
| 7-րդ | »    | »              | »                          |                    |

66. Վայրակների չորացումը կանխելու համար պետք են բարանց թաղած տեղից հանել մասմաս և մի առ մի զննելով՝ հեռացնել նեխաճները, հիվանդներն ու վնասվածները:

67. Լավ արմատացին սխսնմ առաջացնելու և վայրակների հաջող կաջումն ապահովելու համար տնկելուց առաջ այդու դաշտակով կամ մկրատով պետք եւ կարճացնել վայրակի առողջ ար-

մատները 12—14 ոմ վրա, իսկ յեթե արմատների ծայրերը կուլըրված, սևացած կամ չորացած են, կտրել մինչև առողջ մասը: Ցողունի ծայրերը նույնպես պիտի կտրել թողնելով 20—25 սանտիմետր:

68. Վայրակի տնկումը կատարելու համար պետք եւ հավասար հեռավորության վրա լարեր անցկացնել և լարի վրա նշանակվեն վայրակի տնկելու տեղերը:

Սահանց լարի և վոչ ուղիղ շարքերով տնկելը կտրականապես արգելվում է:

Շարքերի հեռավորությունը ձիու կուտիվացիա անցկացնելու պայմանով ընդունել 90 սմ և բույսը բույսից 35 սմ. այս դեպքում մեկ հետարում պիտի տնկել 33 հազար հատ վայրակ:

69. Տնկումը հարմար եւ կատարել յերկու հոգով և հետեյալ ձեռվ. աշխատողներից մեկը շարքի լարի վրա նշանակված նշանաշափերի տեղը բահով փոքրիկ փոս և անում: Այդ ժամանակ 2-րդ աշխատողը վայրակը մինչև արմատավղիկը դնում և փոսիկի մեջ և պահում ձեռքում, մինչև վոր առաջին աշխատողը 2-րդ նշանաշափի տեղը նոր փոս և փորում և այդ փոսի հողը լցնում առաջին փոսի մեջ դրված վայրակի կողերը, հողը լավ նստեցնում ու փոտներով տրորում, ապա 3-րդ փոսի հողը 2-րդ վայրակի տեղը լցնում և այդպես շարունակում:

Վայրակների տնկումը հնարավոր և կատարել նաև գութանով կամ բուկլիցով պատրաստած առվի մեջ:

70. Տնկման ժամանակ պետք եւ խստորեն առաջնորդվել հետեյալ կանոններով.

ա) տնկումները կատարել ըստ վայրակների տեսակավորման կարգերի.

բ) վայրակները տնկել մինչև արմատավղիկը, աշնանը տընկել քիչ խոր.

գ) տնկման ժամանակ վոտով հողը լավ նստեցնել վայրակին և ամուր տրորել.

դ) տնկումները կատարել անպայման ուղիղ շարքերով և վայրակը պահպանել ուղղահայաց ուղղությամբ.

ե) արմատները չչորացնելու համար նախքան տնկելը թաթախել ջրալի կավի խառնուրդի մեջ.

զ) տնկման ընթացքում վայրակներն անընդհատ պահել ջրով լիքը դույլի մեջ.

է) տնկումը կատարել հողի խոնավ ժամանակ.

ը) վայրակները տնկելուց հետո առատորեն ջրել.

թ) յեթե վորև պատճառով վայրակները թառամել են, նրանց մի քանի ժամով դնել հոսող առվի մեջ:

## ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

71. Տնկելուց հետո, հատկապես աշնանը տնկելու դեպքում, անհրաժեշտ ե վայրակների բուկը տալ ձիռ կուլտիվատորով կամ քեթմեններով, ձեռքի թակուչակներով՝ աշնանն ավելի խոր քան գարնանը:

Բուկիցն այն առավելությունն ունի, վոր վայրակները քիչ կորուստ են տալիս ու լավ են կաշում, վայրակի կեղեցը քնքուշ ու հյութալի յե մնում, իսկ դա շատ հեշտացնում է աչքապատճառի կատարումը: Մյուս կողմից՝ բուկից արգած վայրակի ստորին մասներում ավելորդ ճյուղավորություններ չեն անում:

72. Վայրակների մշակման (քաղնան, փիրեցում և այլն) աշխատանքներն այնպես պետք ե տանել, վոր նրանք լրիվ հասունանան պատվաստի համար:

Տարվա ընթացքում առնվազն 4—5 անգամ քաղնան և փիրեցում պիտի կատարել ու միշտ հետևել, վորպեսզի դաշտում մոլախոտերը չզարդանան ու հողը փուլսը լինի, փիրեցումը կատարել ձիռ կուլտիվատորով՝ ջրելուց հետո, հողի քեցը գալուն պես:

73. Խնամքի կարենը նախապայմաններից մեկն ել հողի մեջ բավականաչափ խոնավություն պահպանելն ե՝ հողի կեղևակալման առաջն առնելով և պահանջված ժամանակին ջրելով:

Վայրակների (պատվաստականների) դաշտը հաճախակի և առատորեն պետք ե ջրել, վոչ պակաս 8—10 անգամ հարթավայրի շրջաններում, մյուս շրջաններում՝ 6—8 անգամ, նայած հողային և կիմայական պայմաններին, յերբեք թույլ չտալով, վոր ջրի պակասության հետևանքով բույսերը խեղճանանան:

74. Մյուս կողմից՝ պետք և պայքար կազմակերպել յերևա-

չող ֆլաստուների և հիվանդությունների դեմ՝ ժամանակին բուժելով նրանց, առանձնապես մեծ վնաս են հասցնում լիկները, վորոնց յերևալու դեպքում պետք ե սրսկումներ կազմակերպել՝ անարագին կամ նիկոտին սուլֆատ կոչված նյութերի միջոցով, վերցնելով մեկ լիտր ջրին մեկ գրամ թույն կամ դույլին 10 գրամ:

## ԱԶԳԱՊԱՏՎԱՍ

75. Նախորդ տարվա աշնանը կամ նույն տարվա գարնանը տնկած հնդավորների վայրակները կամ թե կորիզավորների աշնան կամ գարնան ցանած կորիզները տվյալ տարին այնքան են մեծանում, վոր նրանց հնարավոր ե լինում ամռանը պատվաստել (աչքապատվաստ անել):

76. Պտղատնկարաններում ամենատարածված պատվաստի ձեւը աչքապատվաստն ե:

Աչքապատվաստի առավելությունը կայանում ե նրանում, վոր նա ա) շատ հեշտ և արագ ե կատարվում, բ) ամենաանփորձ մարդը կարծ ժամանակում սովորում ե նրա տեխնիկան, դ) պատվաստի ժամանակ վայրակի վրա առաջացնում ե միանգամայն աննշան վերքեր, դ) պատվաստականները (այն բույսերը, վորոնց վրա պատվաստ պետք ե կատարվի) մեծ հաջողությամբ են բըռնում, ե) վորոշ պտղատու տեսակների համար (դեղձ, ծիրան) հանդիսանում են պատվաստի համարյա միակ միջոցը:

77. Աչքապատվաստը կատարվում ե ամռան 2-րդ հյութաշարժության ժամանակ (նրա ամենաուժեղ շրջանում), յերբ պատվաստականները հյութալի յեն լինում ու կեղեցը հեշտությամբ բաժանվում ե բնափայտից, ինչպես նաև մայրացու ծառի բողբոջները նորմալ կերպով, զարգացած են լինում: Խոկ դա լինում ե ոգոստոս-սեպտեմբեր ամիսներին:

Ուշ կատարված պատվաստներն անհաջող են անցնում, իսկ ընդունված ժամկետից շուտ կատարելու դեպքում զրանց բողբոջներն (աչքերը) աճում են և այդ շիրը հնարավորություն չունենալով փայտանալու, ձմռան սառնամանիքների հետևանքով ցրտահարվում են:

78. Նախքան պատվաստ սկսելը, յուրաքանչյուր տնկարանային տնտեսություն պետք ե մանրամասն աշխատանքային պլան մշակի աչքապատվաստի կամպանիայի անցկացման համար, սահմանելով պատվաստվող վայրակների քանակն ու վորոշելով պատվաստող տեսակների և փոփոխակների տոկոսային հարաբերությունը, համաձայն այն ասորտիմենտի, վոր ընդունված է տվյալ շրջանի համար:

79. Վորակու պատվաստականեր ընդունված են հետեւյալ տեսակները.

ա) խնձորենին կարելի յե պատվաստել բոլոր տեսակի վայրի և թղուկային խնձորենու վրա (մարգախնձոր, դուսեն, պարագիկա և այլն).

բ) տանձենին՝ տանձենու և սերկելի վրա.

գ) դեղձենին՝ դեղձենու, ծիրանենու, նշենու և սալորենու վրա.

դ) ծիրանենին՝ դեղձենու, ծիրանենու, նշենու և սալորենու վրա.

ե) դամբուլենին՝ շղորի, դեղձենու, նշենու վրա.

զ) բալենին՝ բալենու և կեռասենու վրա.

հ) կեռասենին՝ կեռասենու և բալենու վրա.

ը) նշենին՝ նշենու և դեղձենու վրա:

Բացի իր տեսակի վրա պատվաստելուց, մյուս բոլոր գեղշերում խորհուրդների համար հարկավոր ե դիմել շրջանային այգեգործ մասնագետին:

80. Վայրակի կեղել հեշտ բաժանվելու համար անպայման անհրաժեշտ ե պատվաստից 4—6 որ առաջ պատվաստակաների հողաման առատորեն ջրել:

81. Պատվաստ կատարելու նախորյակին պետք ե պատվաստակալի (վայրակի) ցողունի ստորին մասում յեղած բոլոր ճյուղերը մինչև 10 ոմ բարձրության վրա կտրել և հեռացնել, այլապես նրանք կիսանգարեն պատվաստի աշխատանքները:

82. Պատվաստման աշխատանքները հեշտացնելու նպատակով, հենց պատվաստի որը կամ նախորյակին հարկավոր ե պատվաստակաների բուկ տված հողը մինչև արմատավղիկը խնամքով հետ տալ:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե արմատավղիկը թաց շորով կամ ճլովով մաքրել վորպեսզի հողի հատիկները չթափվեն աչքի տակը և անարդյունավետ գարձնեն պատվաստը:

83. Տնկարանային տնտեսությունների վրա մեծ պատասխանավություն ե դրվում գտասորտ և բարձրորակ տնկանյութ արտադրելու գործում:

Նրանք պարտավոր են ապահովել բացառաբար արժեքավոր ստանդարտ փոփոխակների բազմացումը, այդ իսկ տեսակեւ տից չափազանց կարեռ և բացառիկ, լուրջ ուշադրություն դարձնել աչքապատվաստի համար խիստ անհրաժեշտ կտրոնների մթերման վրա:

84. Յուրաքանչյուր խոշոր, մշտական տիպի տնկարան տընտեսության համար անհրաժեշտ կտրոնները հայթայթելու նպատակով պարտավոր ե կազմակերպել մայր (դա այն այգին ե, վոր տնկվում ե արժեքավոր և ստանդարտ փոփոխակներից, հատկապես պատվաստի համար կտրոնները հայթայթելու համար):

85. Մայր այգի չունենալու գեղքում պետք ե հատուկ փորձված մասնագետների միջոցով ընտրել այն ծառերը, վորոնք պիտանի յեն վորպես մայրացու ծառեր և համապատասխանում են տվյալ շրջանի ստանդարտին:

86. Կտրոնները պետք ե մթերել պտղաբերող, միանգամայն ստուգված, հիվանդություններից ու վնասաստուններից զերծ ու առողջ ծառերից:

87. Պահանջվող արժեքավոր կամ զեֆիցիտային սորտերի, ինչպես Միջուրինյան և այլ սորտերի բերքատու ծառերի բացակայության գեղքում կարելի յե վորպես կտրոններ ոգտագործել նաև յերիտասարդ ծառերի շվերը. նույնիսկ տնկարանում յեղած տնկինների այն շվերից, վորոնք ողակավորման հետևանքով հեռացվելու յեն, յեթե միայն հաստատավես ստուգված ե նրանց փոփոխակը:

Վորպեսզի կտրոնների համար մթերվելիք շվերը շուտ հասունանան, անհրաժեշտ ե նրանց ծայրերը ծերատել մթերումից 15—20 որ առաջ:

88. Պատվաստի կտրոնները պետք ե լինեն միջակ հաստու-

թյան, հավասարապես աճած, միանգամայն հասունացած և ձևակերպված բողբոջներով:

Նվազ աճած, կարճ շվերից կտրոններ չվերցնել:



Ակ. 4. Կեռասինուց կտրած և սրանից ստացած պատվաստի կտրոնը  
ա) շեղը, բ) և գ) շվերից կտրվելիք մասերը,  
դ) կտրոնի միջին մասը, ե) աչքապատվաստի համար պատրաստի կտրոնը

ցից խրճեր կապել 100-ական հատից, խրճի մեջ զներով պիտօնաներ, վորոնց վրա ցույց տալ փոփոխակի մթերման որը և մթերողի անուն աղգանունը:

89. Մթերած կտրոններից հարկավոր և անմիջապես դանակով հեռացնել տերևները, թողելով մեկ օմ յերկարությամբ տերեւակոթուն, վոր անհրաժեշտ և հարմարության համար կեղմի տակ աչքը տեղապորելու ժամանակ:

Տերևների հեռացումը նվազեցնում է կտրոնի դուրշիցումը և այդպիսով պահպանում բողբոջների թարմությունն ու կենսունակությունն ավելիլիյերկար:

90. Մթերած կտրոնները հենց սույն պահին պետք են փաթաթել խոնավ շորի մեջ, դնել թաց խոտի տակ կամ թե պահել տուվի մեջ, իսկ յեթե տուռ չկա՝ ջրով լցրած վորես ամանի մեջ; Կտրոնները լավ են պահել խոնավ և սառը նկուղում:

Յերկար ժամանակ ջրի մեջ պահել չի կարելի:

91. Վորոշ քանակությամբ կտրոնները մթերելուց հետո պետք են նրանց խրճեր կապել մասերը, վորից կապարակ մասը և մթերման որը և մթերողի անուն աղգանունը:

Կտրոնները տեղափոխելու ժամանակ պետք են նրանց փաթաթել թաց շորի մեջ և մինչեւ պատվաստ սկսելն անընդհատ պահել հով ու խոնավ տեղ:

Նվատակահարմար են կտրոնները մթերել հենց պատվաստի որը կամ նախորյակին, բայց վոչ շուտ յերկու որից:

92. Պատվաստի ժամանակ անհրաժեշտ են կտրոնի վերին և ներքին մասերը կտրել ու հեռացնել, ոգտագործել միայն կտրոնի միջին մասի առողջ և հասունացած աչքերը:

Յուրաքանչյուր կտրոնից կարելի յե ոգտագործել 4—8 աչք, նայած աճեցողության ուժին և կտրոնի տեսակին:

93. Աչքապատվաստի համար հարկավոր են ձեռք բերել հատուկ աչքապատվաստի դանակներ և աշխատանքի ընթացքում նրանց միշտ պահել սուր վիճակում:

Աչքապատվաստի դանակով չի կարելի այլ աշխատանք կատարել, բացի աչք կտրելուց և կեղեւ ձեղը բացելուց:

94. Աչքապատվաստը չի կարելի կատարել որվաշուկ ժամերին, քամուտ յեղանակին կամ անձրեսի ժամանակ, վորովհետեւ վերքի վրա կարող են թափվել ջրի կաթիլներ և փոշու հատիկներ ու դժվարացնել պատվաստակալի ու պատվաստացուի (կտրոնի) հաջող միացումը:

95. Պատվաստակալները (վայրակները) պատվաստի համար հասունացած են համարվում այն դեպքում, յերբ նրանք արմատավղիկի մոտ ունենում են մոսավորապես հասարակ մատիտի հաստություն:




Ակ. 5

96. Աչքապատվաստի համառոտակի տեխնիկան հետեւյալն են բույսի հյուսիսային կողմից արմատավղիկի վրա կատարել «Տ»աձև կտրվածք: Վորից հետո սուր դանակով կտրոնից հանել աչքը բնափայտի բարակ շերտով ու զգուշությամբ տեղափորել բացված ճեղքվածքի տակը, շատ խոր և բութ մատով ճեղքվածքի կեղեւ սեղմել դեպի աչքը:

Այդ ժամանակ 2-րդ աշխատողն ամուր փաթաթում ե պատվաստը: Լավ փորձված ու վարժված աչքապատվաստ անողներն որպական կատարում են 700—800 և նույնիսկ ավելի պատվաստ:

97. Լավագույն փաթաթանյութը ռաֆիխն ե, բայց վերջինս դժվարությամբ ե ձեռք բերվում, ուստի պետք ե ոգտագործել ճկովը, և տեղական հնարավորությունները (որինակ՝ Ստեփանավանում «խնձլամոր տակոի» կոչված բույսը):



Նկ. 6. Վայրակի կեղեւ Դ-աձեւ կտրվածքը, վահանաձեւ մասի կտրելը կտրոնից. վահանաձեւ մասը վայրակի կտրվածքի մեջ դրած


98. Խափիան կամ ճլոպը կտրատվում ե հավասար մասերի՝ 50 սմ յերկարությամբ, ճկովը թեթեակի թրջվում ե: Թրջելն անհրաժեշտ ե այն տեսակետից, զոր թաց փաթաթանյութը ընդհուպ նստում ե պատվաստի վերքին. աշխատանք կատարելն ել այդ դեպքում ավելի հարմար ե:

99. Աչքապատվաստն անպայման պետք ե կատարել առանձին շարքերով. միաժամանակ անհրաժեշտ ե հատուկ տնկարանային մատյաններում ճիշտ գրանցումներ կատարել, վորտեղ

ցույց տալ շարքերի համարները, պատվաստող փոփոխակների անունը, կտրոնի վորտեղից վերցրած լինելը, պատվաստ անողի անունն ու ազգանունը և կատարված աչքապատվաստի քանակն ըստ սորտերի:

100. 10—15 որ հետո կատարված աչքապատվաստներն ստուգման են յենթարկվում՝ համոզվելու համար, թե պատվաստները բռնել են արդյոք:

Ցեթե աչքերի վրա մնացած տերեակոթունին մատի ծայրով դիպչելուց հեշտությամբ ընկնում ե, կամ մինչ այդ ինքն իրեն ընկել ե, և աչքն ել թարմ ու կանաչ ե, ապա դա ապացույց ե, վոր-



Նկ. 7. Փաթաթելը և կապելն աչքապատվաստի ժամանակ (1, 2, 3, 4, 5, 6)

աչքը բռնել ե, իսկ լեթե տերեակոթունը չորացել ե և չի ընկնում ու աչքն ել մուգ ե, իսկ կեղեւը թառամած՝ նշանակում ե պատվաստը չի բռնել:

101. Խնձորի ու տանձի վայրակների վրա կատարված պատվաստները բռնում են ավելի հաջող քան կորիզավորների վրա:

Համենայն գեպս գարնանը հաշվելու գեպքում պատվաստների բռնելու տոկոսը չպետք է ցածը լինի հնդավորների համար  $90^{\circ}/_0$ -ից և կորիզավորներինը՝  $65—70^{\circ}/_0$ :

102. Աչքապատվաստ չբռնած վայրակների վրա նշաններ են արվում ու ձեռնարկվում 2-րդ անգամ (վերապատվաստ անելու):

Այս անգամ կապերը հեռացնում են և աչքապատվաստը կատարում վայրակի հակառակ կողմից—առաջին անգամ կատարված պատվաստի տեղից քիչ բարձր, յեթե նախորդ պատվաստը յեղել ե արմատավղիկի վրա. բարձր կատարված պատվաստի դեպքում վերապատվաստները կատարել ցածր:

10—15 որ հետո վերապատվաստները ևս ստուգվում են:

103. Վարակները պատվաստից հետո ել շարունակում են աճել և հաստանալ, վորի հետևանքով պատվաստի ամուր կապերը սեղմում են կեղեկի տակ և սեղմվածք առաջացնում: Այդ սեղմվածքի տեղը բույսերը հեշտությամբ կոտրվում են:

Առանձնապես ուժեղ աճում են դեղնն ու ծիրանը, ուստի և առաջին վերստուգում կատարելու ժամանակ պարտադիր կարգով ուժեղ աճածների կապերը պիտի թուլացնել՝ պտտելով հակառակ ուղղությամբ և կամ քանդել ու նորից կապերը:

Հնդավորների վրա յեթե նկատվի սեղմվածքի առաջացում, նույնպես պիտի թուլացնել կապերը: Հարդ վերստուգման ժամանակ կորիզավորների կապերը ճնշելու դեպքում հարկավոր է թուլացնել Հարդ անգամ:

104. Աչքապատվաստ կատարված հողամասը կարելի յերել պատվաստ անելուց 12—15 որ անցնելուց հետո միայն. այդ ժամանակից շուտ ջելու դեպքում չուրը ներս մտնելով պատվաստի վերքերի մեջ՝ կարող ե փչացնել նրան:

105. Հայաստանի պայմաններում, ուր ջերմաստիճանի սուր տատանումների հետևանքով պատվաստած աչքերը ցրտահարվում են, անհրաժեշտ և Հարդ վերստուգման ժամանակ պարտադիր կարգով բոլոր տեսակի պատվաստակաների բուկը տալ փափուկ հողով, ծածկելով ամբողջ աչքը:


## ԳԱՐՆԱՅԻՆ ՊԱՏՎԱՍ

106. Աշնան կատարված աչքապատվաստների վորոշ մասը (հատկապես կորիզավորների) ձմռան ցրտերի կամ այլ պատճառներով փչանում ե: Այդ դեպքում անհրաժեշտություն է զգացվում նրանց նորից պատվաստել հաջորդ տարվա գարնանը,

բույսերի գարնանային հյութաշարժության ժամանակ, յերբ կեղեն սկսում ե հեշտությամբ անջատվել և վայրակի բողբոջները գեռնս չեն բացվել:

107. Գարնանային պատվաստ կարելի յե կատարել թե աչքով և թե կտրոնով—մատով (կտրնապատվաստ կամ մատապատվաստ):

Աչքով կարելի յե պատվաստել կորիզավորները, իսկ կտրո-



Նկ. 8. Հասարակ կտրոնապատվաստ, անգլիական կտրոնապատվաստ, թամբաւած կտրոնապատվաստ

նով միմիայն հնդավորները, վորովնետե կորիզավոր տեսակները պատվաստի այս ձեզ վատ են բռնում:

108. Թե գարնանային աչքապատվաստի և թե կտրոնապատվաստի դեպքում անհրաժեշտ կտրոնները պետք ե պատրաստել ուշ աշնանը ծառերի տերևաթափից հետո, կամ վաղ գարնանը՝ մինչև ծառերի բողբոջների բացվելը.

Մթերած կտրոնները պետք և պահել հով պահեստներում,  
3—5 աստիճան շերմության տակ, թեթևակի խոնավացրած ավաս-  
դի մեջ:

Դարնանային աչքապատվաստի տեխնիկան նույնն է, ինչ  
և ամառայինը:

109. Կտրոնապատվաստը լինում ե յերկու ժեստի—հասարակ և  
անգլիական:

Կտրոնապատվաստի հաջողության առաջին և ամենակարե-  
վոր նախապայմանը պատվաստակալի և պատվաստացուի (կտրո-  
նի) միահավասար հաստությունն է:

110. Հասարակ կտրոնապատվաստի դեպքում պատվաստա-  
կալը և կտրոնը կտրում են թեք ձեռվ այնպես, վոր կտրվածքի  
յերկարությունը 3—4 անգամ ավելի մեծ լինի կտրոնի և պատ-  
վաստակալի հաստությունից:

Հետո կերկու կտրվածքներն իրար վրա յեն դրվում այնպես,  
վոր նրանք հավասարապես միանան. ապա կապում են փաթա-  
թանյութով ու մածիկ քսում:

Բայց այս ձևով կատարված պատվաստները յերբեմն լավ  
չեն կազում, ուստի և շատ հաճախ գործ և ածվում ավելի կատա-  
րելագործված՝ անգլիական կտրոնապատվաստը:

111. Անգլիական կտրոնապատվաստի դեպքում պատվաս-  
տակալի և կտրոնի նույնաձև թեք կտրվածքի վրա վերին ծայ-  
րից մեկ յերրորդի վրա սուր դանակով ձեղքվածք են անում.  
Ճեղքվածքի խորությունը հավասար պիտի լինի շեղակի կտրված-  
քի կեսին, լեզվակները հագցնում են իրար մեջ շատ ամուր ու  
կապում փաթաթանյութով և մածիկ քսում:

Վերը հիշված յերկու տեսակի կտրոնապատվաստների ժա-  
մանակ կտրոնը պետք և ունենա 2—3 աչք:

## ՏՆԿԱՐԱՆԻ 2-ՐԴ ԴԱՅՏ—ՄԻԱՄՅԱԿԱՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄ

Տնկարանի առաջին դաշտը հաջորդ տարին արդեն կոչվում  
է 2-րդ դաշտ, այս դաշտում են գտնվում պատվաստված վայ-  
րակները, այստեղ են աճեցվում միամյա տնկիները:

112. Յեթե պատվաստված վայրակները կամ պատվաստա-  
կալները թողնենք այնպես, ինչպես կան, ապա պատվաստված  
աչքը, վոր աճելով հետազայում ազնիվ տնկի յե դառնալու, բո-  
լորովին չի աճի, կամ շատ թույլ աճեցողություն կունենա: Պատ-  
վաստի աչքին թույլ չեն տա աճելու վայրակի վրա յեղած բաղ-  
մաթիվ առողջ բողբոջները:

Վորպեսզի՝ պատվաստված աչքն ազատորեն զարգանա և  
աճի, անհրաժեշտ ե շատ վաղ զարնանը, մինչև զարնանային  
հյութաշարժությունը, մինչև բողբոջների բացվելը այգու դանա-  
կով պատվաստված աչքի տեղից 12—15 սմ բարձր  
վայրակի վերին մասը կարել ու հեռացներ

Վայրակի թողած մասը (12—15 սմ բարձ-  
րությամբ) կոչվում ե բարքակ կամ յեղունգ, իսկ  
այդ գործողությունը՝ բուրակով եւ:

Բութակը (յեղունգը) թողնում ենք  
նրա համար, վորպեսզի պատվաստած աչքից  
աճող շիվը հնարավոր լինի կապել բութակին և  
շին տալ ուղղահայց դրություն:

113. Բութակով ետի հետ միաժամանակ  
հարկավոր ե վոչնչացնել վայրակի (թե բութակի  
և թե պատվաստակալի վրա) յեղած բուրու ճյու-  
ղերը և բողբոջները, ինչպես նաև հեռացնել պատ-  
վաստների կապերը, թույլ տալով պատվաստի  
աչքին ազատորեն զարգանալու:

114. Հետագայում, յերբ վայրակի վրա թո-  
ղած մասում կակսեն աճել բողբոջները, նրանց  
անհրաժեշտ ե առանց ուշացնելու վոչնչացնել և  
այդ աշխատանքները կրկնել 10—15 որ անցնելուց հետո ու յեր-  
բեք թույլ չտար, վոր վայրակի բողբոջներն աճեն, այլապես  
նրանք կիւլեն պատվաստավի հյութերը և կթուլացնեն նրան:

115. Յերբ պատվաստած շիվը կունենա 8—10 սմ յերկա-  
րություն, պետք ե նրան ճլոպով կապել բութակին՝ շիվ հիմքի  
մասում, ութ թվանշանի ձևով:



Կապումն ավելի վերը կատարելու դեպքում շիվը ծռվածք կստանա, վոր ցանկալի չեք:

110 Պատվաստված շիվը 20—25 սմ դառնալու դեպքում հարկավոր ե 3-րդ անգամ կապել բութակին 10—15 սմ բարձրության վրա, քանի վոր շիվը ելի ծռվում ե մի կողմէ:

117. Հուլիս ամսի վերջին պատվաստած շիվը իր ստորին մասում փայտանում ե և այնքան մեծացած ե լինում, վոր կարող ե առանց կապի ուղիղ մնալ:


Այդ ժամանակ կապերն արձակում են, իսկ բութակն ամբողջովին կտրում հեռացնում:

Բութակը պետք ե կտրել այդու սուր դանակով. կտրվածքը կատարել բոլորովին հարթ ու միանդամից և չթողնել բութակի հետք:

118. Պատվաստի բնի վրա մինչև սաղարթի հիմնական ճյուղերն ամառվա ընթացքում լիրեացող բոլոր մանր ճյուղերը 2—3 անգամ պետք ե ծերատումներ կատարել ցողունի հաստացման համար:

119. 3-րդ դաշտում պատվաստաշվերի հետագա խնամքը կայանալու յև հողը 4—5 անգամ փլարեցնելու և ժամանակին ու ըստ պահանջի ջրելու մեջ:

Վնասատուներ յերեալուն պես անհրաժեշտ ե պայքար կազմակերպել նրանց դեմ:



Նկ. 10. Բութակին կապված աղնիվ շիվը ա) բութակ, բ) աշքապատվաստի տեղը, ց) բութակով ետք տեղը, դ) պատվաստաշիվը, ե և ը<sup>1</sup> կապերը, ց) բութակը հեռացնելու (կըրելու) տեղը, յերբ արդեն աղնիվ շիվը ամրացրել ե.

120. Ամառվա ընթացքում բավարար խնամքի ընթացքում

պատվաստները բավականաչափ աճում են և համառ մոտավորապես մեկ մետր ու ավելի բարձրության:

Տերեւաթափից հետո նրանք արդեն կոչվում են միաժակներ:

Կորիզավոր տեսակները հատկապես դեղնա ու ծիրանը Հայաստանի պայմաններում այնքան են մեծանում, վոր նրանց միանգամայն հնարավոր ե և նպատակահարմար բաց թողնել տնկարանից՝ պտղատու այգում տնկելու համար:

Իսկ հնդավորները սովորաբար տնկվում են յերկու տարեկան հասակում, վորպես յերկամյակներ, ուստի նրանք մի տարի ևս պետք ե մնան տնկարանում:

### ՏՆԿԱՐԱՆԻ Յ-ՐԴ ԴԱՅԸ

121. Տնկարանի Յ-րդ դաշտում (պատվաստի Յ-րդ տարին) աճեցվում են հնդավորների միամյակները, հազվագյուտ դեպքում նաև կորիզավորները:

Այս դաշտում կատարվում ե միամյա տնկիների ձևավորման լուրջ աշխատանքը:

Գարնանը մինչև հյութաշարժության սկսելը միամյակներն ետքում են 60—80 սմ բարձրության վրա, նայած տեսակին ու փոփոխակին, այն նպատակով, վորպեսզի առաջացվեն անհրաժեշտ ճյուղավորություններ՝ տնկիների սաղարթը ձևավորելու համար:

122. Զեավորման յերկու սիստեմ գոյություն ունի. ա) գերմանական հինգճյուղյա սաղարթի ձևավորման՝ Կռեյի սիստեմ և բ) նոր, ավելի կատարելագործված ու այժմ տարածված ամերիկյան Լիդերային սիստեմ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Զեավորման այս յերկու սիստեմների տեխնիկայի մասին կարդալ «Պաղատու այգու ազգութեանարկումների» համապատասխան գլուխը:

123. Տնկարանի Յ-րդ դաշտում, բացի ձևավորումից, ինչպես մնացած դաշտերում, սովորական կարգով կատարվում են քաղհան, հողի փլարեցում, դաշտի ջրում և այլն:

### ՏՆԿԻՆԵՐԻ ՀԱՆՈՒՄԸ

125. Տնկիներն աշնան տնկման համար պետք ե հանել աշնանը, իսկ գարնան տնկման համար հանել գարնանը: Բացառիկ

գեղքերում՝ հեռավոր վայրեր կամ լեռնային շրջաններ ուղարկելու դեպքում կարելի յէ հանել աշնանը՝ դարնանը տնկելու պայմանով:

Տնկիները հանելու ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրանց լրիվ հասունացման վրա, վորովհետև վոչ լրիվ հասունացած տնկիներն աշնանը տնկելու դեղքում ուժեղ չափով վնասվում են ձմեռային ցրտահարություններից:

Վորպեսզի տնկիները շուտ հասունանան, անհրաժեշտ և հանելուց 30—40 որ առաջ հողամասում դադարեցնել փխրեցումն ու ջրումը:

125. Անհրաժեշտ ե հիշել, վոր հետագա ոգտագործման համար միանգամայն առողջ և լավ զարգացած տնկիներն են պետքական:

Տնկիներն այգում տնկում են մի քանի տասնյակ տարիների համար, ուստի և նրանք անպայման բարձր վորակի պիտի լինեն:

Տնկարանից բաց թողնվելիք տնկիները պետք ե բավարարեն հետեյալ պահանջները.

ա) ունենան 25—30 սմ-ից վոչ պակաս յերկարության փրնացավոր արմատներ, բ) լավ զարգացած և ուղիղ ցողուն՝ առողջացած վերքերով, գ) կանոնավոր ձեւավորված աշղարթ, դ) ճշտորեն համապատասխանեն սորտին, ե) զերծ լինեն միխանիկական վնասվածքներից, զ) բավականաչափ հասունացած և փայտացած մնեն:

126. Տնկիների հանումը մեզ մոտ գենաւ կատարվում ե բաշ հով. թեկուզ և արգեն գոյություն ունեն հանելու հատուկ գութաններ և մեքենաներ:

Տնկիների հանումը բահով կատարվում ե հետեյալ կերպ. տնկենու մի կողմից 30—40 սմ խորությամբ առու յէ փորվում: Առաջին բանվորը տնկենու բնից ձեռքով բռնելով թեքում և առվի կողմը և քիչ քաշում գեղի իրեն: Այդ ժամանակ 2-րդ բանվորը բահը խրելով հողի մեջ 30—40 սմ վրա կտրում ե արմատները, վորեց հետո առաջին բանվորը տնկինին ամբողջությամբ զծուշությամբ հանում ե:

127. Տնկիների արմատները խիստ տուժում են չոր ողից և սառնամանիքներից, ուստի նրանց բացովիյա թողնել չի կարելի: Այդ տեսակետից հանած տունկը մինչեւ տնկարանի համապատասխան վայրը տեղափոխելը հենց նույն փոսում անմիջապես պետք թաղել, կարծ ժամանակից հետո աշնանը տնկիներն այլ վայրեր ուղարկելու կամ տնկարանից պարբերաբար բաց թողնելու դեղքում տնկիների թաղումը կատարվում ե թեթևակի, իսկ յերկար ժամանակ, որինակ՝ ամբողջ ձմեռը պահելու դեղքում հարկավոր ե նրանց թաղել հատուկ խնամքով ու լրջությամբ, վորպեսզի նրանք ձմեռվա ընթացքում չխնասվեն:

128. Տնկիները թաղելու համար պետք ե ընտրել չոր ու սալվերոտ տեղ, ուր գարնանային ջրերը չեն վողողում և ջուրը չի լմանում. այդտեղ առուներ փորել մինչեւ 50 մետր յերկարությամբ, 1—1,5 մետր լայնությամբ և 50 սմ խորությամբ:

Առվի մի պատը թեք և արվում և այդ կողմում դարսվում են տնկիները մեկ ծառի շերտով, ըստ առանձին-առանձին սորտերի: Ապա պետք ե ծածկել հողով ամբողջովին թե արմատները և թե ցողունը:

Առաջին շարքից հետո դարսվում ե 2-րդ շարքը, 3-րդ շարքը և այլն. ըստ վորում յուրաքանչյուր շարքը մյուսից բաժանվում ե 25—30 սմ հողի շերտով:

Ծածկելուց հետո հողը լավ պետք ե կոխոտել և նստեցնել արմատներին, վորպեսզի դատարկ տեղեր չմնան:

Տնկիները թաղելուց հետո հողամասը պետք ե լավ ջրել:

129. Տնկիները հեռավոր վայրեր տեղափոխելու դեղքում, պիտի հակավորել, վորպեսզի փոխադրելը հարմար լինի և ձանապարհին նրանք չչորանան կամ ցրտահարվեն:

Հակավորման համար ոգտագործում են ձլոպը, մամուռը, խսիրը և այլն:

Հանձնարարվում ե ամեն հակի մեջ տեղավորել 50-ական հատ յերկամյա, կամ 100-ական հատ միամյա տնկիներ, վորոնց վրա նշանակել պտղատու ծառերի տեսակը, փոփոխակը և տնկարանի անունը:



Կազմեց՝ Ն. Ոհանյան  
Խմբ.՝ Աղ. Զիթչյան  
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան  
Գլավիտի լիազոր № 1153  
Հրատ. № 403, տիրաժ 1000, պատվել 155  
Հանձնված և արտադրության 1937 թ. փետրվարի 11-ին  
Ստորագրված և սպազմելու 1937 թ. մարտի 14-ին  
Քյուղիբասի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11

«Ազգային գրադարան



NL0289762

147

19.673

ԴԻՆԸ 26 ԿԱՊ.



Наркомзэм Арм. ССР—садоводческое управление

Агротехнические мероприятия

по плодовым питомникам

Сост. Л. Оганян

---

Сельхозгиз

1937

Ереван